ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 468-Ա
« 30 » ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2024Թ.
ԳԱՅԱՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության մարզերի առողջապահության համակարգերի օպտիմալացման ծրագրերը հաստատելու մասին» թիվ 1911-Ն, 2019 թվականի հոկտեմբերի 10-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի N1911-Ն որոշման մեջ լրացումներ եվ փոփոխություններ կատարելու մասին» N1425-Ն որոշումներով, հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2024 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 384-Ա որոշումը և 2024 թվականի օգոստոս 13-ին Գայանե Հարությունյանի հետ կնքած ժամկետային աշխատանքային թիվ 34 պայմանագրի 5.1 կետի բ) ենթակետը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Դադարեցնել ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Մալիշկա գյուղական բժշկական ամբուլատորիա» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Գայանե Հարությունյանի լիազորությունները: Աշխատանքային վերջին օրը համարել 2025 թվականի հունվարի 3-ը:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 3-ից:

Recoverable Signature

X

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

ք. Եղեգնաձոր